

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Բ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԽՈՐ ԽՈՐՃՈՒՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Հետևեալ երեք կոռուսերը կը քաղենք Մայր
Աթոռոյ պաշտօնական ամսագիր Էջմիածինի 1956
Նոյեմբեր-Դեկտեմբեր թիւէն, երուսաղմի հար-
ցերուն հետ ունեցած իրենց պաշտօնական կա-
պակցութեան համար։ Խմբ. ՍՄԻՒ

Գերազոյն Հոգեւոր Խորհուրդը իր սոյն
նիստում (Նոյեմ. 9ի) նորից զբաղուց Երու-
սաղմի խնդրով, այս հարցի վերաբերեալ
նոր փաստարդերի եւ նախակարական նիւ-
րերի նիման վրայ։

Նորին Ս. Օծուրիւն Վեհափառ Հայրա-
պետը Գերազ. Հոգ. Խորհրդի այս նիստում
յայնեց այն մասին, որ ինքը Տ. Եղիշէ Արք-
եպիսկոպոսի հետ ունեցած խօսակցութեան
ընթացքում Նոյեմբերի 4ին թելադրել է նրան,
Հայ Եկեղեցու ընդհանուր ժամերից ելնելով,
հրաժարուել Ս. Արքունու ունեցած իր պա-
տօններից եւ չվերադառնալ առհասարակ
Երուսաղմի։

Տ. Եղիշէ Արքեպոս.ը հիմնականում հա-
մամիտ է եղել Վեհափառ Հայրապետի թե-
լադրութեան եւ խոսացել է որու ժամա-
նակի համար հաւուել ամեն գործից։

(Էջմիածին 1956, Նոյ.-Դեկ., էջ 25)

ԼՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ Ա. ԷՋՄԻԱԾՈՒՆԵՐ

Նոյեմբեր 5ին, Մելուշաբերի, առաջօ-
եան ժամը 7ին, Մայր Արքունից դեպի Մոս-
կուա մեկնեցին ... Տ. Եղիշէ Արքեպոս. Տեր-
եւեանը եւ Շահէ Վ.րդ. Անկմեանը: ...
Հիւրերը երեք որ Մոսկուա մեալուց յիսոյ
Նոյեմբերի 9ին նախապարհուղեցին դեպի
Ցիւրիս։

(Էջմիածին 1956, Նոյ.-Դեկ., էջ 27)

ՄԱՅՐ ԱԹՈՈՒԻ ԴԻՒԱՆԱՏՈՒՆԵՐ

Վերջին Սփիւրէի մի շաբ թերեւում
եւեւաց մի հաղորդագրուրիւն այն մասին,
որ Նոյեմբերի 2ին Մայր Արքու Ս. Էջմիած-
ինի Լիզան են մեկնած Գերազուրի Տ. Եղիշէ
Արքեպոս, Տերեւեանը եւ Հոգեւորի Տ. Շահէ
Վ.րդ. Անկմեանը՝ յատելուրիամբ։

Այս առքիւ Մայր Արքուի Դիւանատունը
լիազօրուած է պատօնապես յայտարակելու,
որ Գերազ. Տ. Եղիշէ Արքեպոս. Տերեւեանը
եւ Հոգ. Տ. Շահէ Վ.րդ. Անկմեանը Նոյեմ-
բերի 9ին Մոսկուայից մեկնել հետուից յիսոյ
ունեցել ոչ մի հարցի կապակցուրեամբ՝ յա-
նուն Վ.են. Հայրապետի բանակցուրիւններ
վարելու Լիզանուում կամ այլուր։

(Էջմիածին 1956, Նոյ.-Դեկ., էջ 122)

5 Յունիւար 1956 թ.

Էջմիածին

ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՈՒԻՑ

Հայկական ըլլալով մէկտեղ հետզհետէ մի-
ջազգային երեւոյթ մը կը ստանայ։

Արդէն ճաշկերոյթէն շաբաթ մը առաջ
տեղական թերթերը, ուստիսն և թելիվի-
ժընը սկսան ծանուցանել գալիք հայկական
ճաշկերոյթ - պարահանդէսը։ Թերթերը ար-
պեցին և թելիվիժընն ալ ցոյց պուաւ հայ
տիկիններու պատկերները ազգային տա-
րազներով։ Եւ ճաշկերոյթն անցաւ յաջող՝
ամէն կերպով։ Արդէն ժամը 6ին բազմու-
թիւնը սկսաւ գալ ճաշասրահը՝ ճաշակելու
հայկական համեղ կերակուրները։ Տիկին-
ներ և օրիորդներ ազգային գոյնզգոյն տա-
րազներով՝ կը սպասարկէին ժողովուրդին։
Զարմանալին այն է որ Հայերէ շատ աւելի
ստարներ էին որ եկան ո՛չ միայն ճաշա-
կելու հայկական կերակուրները, այլ նաև
անոնցմէ շատ մեացին մինչև վիրջ և Հայերէ
աւելի մեծ հուադով մասնակցեցան հայ ժո-

ղովրդական պարերուն։ Իրապէս հաճելի ե-
րեւոյթ էր տեսնել աւելի քան 50 պարող-
ներ մէկ անգամէն հսկայ չուրջապարի մը
մէջ՝ կենսուրախ և թրգոսուն՝ թխահեր ու
խարտեաչ խառնուած իրար։

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը այս
առթիւ կերակրեց աւելի քան 400 անձեր
և ժամը 9ին արդէն կերակուրներն սպա-
ռած էին։ Սարկա անշուշտ դիւրին գործ չէ։
Կը պահանջէ ծանր աշխատանք։ Բայց ու-
րովհետեւ այդ աշխատանքը մեր սուրբ ու
միրելի Եկեղեցիին համար է՝ ամէն տանին
անոնք սիրով յանձն կ'առնեն զայն։

Վատահ եմ թէ Մաքրամէնթոյի Հայու-
թեան զգացումներուն թարգմանն եղած
պիտի ըլլամ հրապարակաւ յայտնելով մեր
կիացումն ու գնահատանքը Եկեղեցասէր
Միութեան ժրածան անդամներուն իրենց
օգտաշատ գործունէութեան համար։